ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԱՊՈՍՏԻԼՈՎ ՎԱՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 3. Պաշտոնական փաստաթղթերի ապոստիլով վավերացման գործընթացը

1. Հայաստանի Հանրապետությունում ապոստիլով վավերացվում են այն պաշտոնական փաստաթղթերը, որոնք ներկայացվելու են Կոնվենցիային անդամակցող պետությունների տարածքում:

2. Օտարերկրյա պետության իրավասու մարմինների կազմած և տված փաստաթղթերը Հայաստանի Հանրապետությունում ապոստիլով վավերացման ենթակա չեն:

3. Հայաստանի Հանրապետությունում կազմված և տրված պաշտոնական փաստաթղթերը Հայաստանի Հանրապետությունում ապոստիլով վավերացվում են արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարության կողմից, բացառությամբ օտարերկրյա պետություններ ներկայացնելու համար Հայաստանի Հանրապետությունում քրեական հետապնդման, հետախուզման և դատվածության բացակայության մասին տեղեկանքների, որոնք ապոստիլով վավերացվում են ~~արտաքին գործերի ոլորտում~~արտաքին գործերի և միջազգային առևտրի ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարության կողմից:

4. Օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմիններ ներկայացված պաշտոնական փաստաթղթերն ապոստիլով վավերացվում են արտաքին գործերի և միջազգային առևտրի ոլորտում ~~արտաքին գործերի ոլորտում~~ Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարության կողմից:

5. Պաշտոնական փաստաթղթերն ապոստիլով վավերացնելու համար դիմում ներկայացնելու կարգը, ապոստիլի ձևանմուշը, տեսակները, վավերապայմանները, «Էլեկտրոնային ապոստիլ» միասնական էլեկտրոնային կառավարման համակարգը գործածելու, տվյալները պահպանելու, ոչնչացնելու ժամկետները և կարգը, «Էլեկտրոնային ապոստիլ» միասնական էլեկտրոնային կառավարման համակարգի միասնական շտեմարանը վարելու, օգտագործելու և տեխնիկական ապահովումն իրականացնելու կարգը, ինչպես նաև ապոստիլով վավերացվող պաշտոնական փաստաթղթերի ցանկը սահմանվում են արդարադատության և արտաքին գործերի և միջազգային առևտրի ~~արտաքին գործերի~~ ոլորտներում Կառավարության

քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարների համատեղ հրամանով:

6. Պաշտոնական փաստաթուղթն ապոստիլով վավերացնելու համար գանձվում է պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված չափով և կարգով:

7. Պաշտոնական փաստաթուղթն ապոստիլով վավերացնելու մասին դիմումին կից ներկայացվում են դիմողի անձը հաստատող փաստաթուղթը, ապոստիլով վավերացման ենթակա պաշտոնական փաստաթուղթը, սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված պետական տուրքի վճարման հավաստումը:

8. Այլ անձի պատկանող պաշտոնական փաստաթուղթը երրորդ անձանց կողմից ապոստիլով վավերացնելու նպատակով դիմում ներկայացնելիս լիազորագիր չի պահանջվում:

9. Պաշտոնական փաստաթուղթն ապոստիլով վավերացվում է դիմումը ներկայացնելուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում:

10. Սույն հոդվածի 9-րդ մասում նշված ժամկետը կարող է երկարաձգվել, եթե «Էլեկտրոնային ապոստիլ» միասնական էլեկտրոնային կառավարման համակարգի միասնական շտեմարանում բացակայում են ապոստիլով վավերացնելու համար ներկայացված պաշտոնական փաստաթուղթն ստորագրող պաշտոնատար անձի պաշտոնավարման, պաշտոնեական դիրքի, ստորագրության, կնիքի կամ դրոշմակնիքի վերաբերյալ տեղեկությունները:

11. Սույն հոդվածի 10-րդ մասում նշված դեպքերում արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարությունը հարցում է կատարում պաշտոնական փաստաթուղթը տրամադրած մարմին՝ այն կազմող և հաստատող անձի վերաբերյալ տեղեկությունները, ստորագրության, կնիքի կամ դրոշմակնիքի նմուշներն ստանալու նպատակով, որն ստանալուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, ներկայացված փաստաթուղթը վավերացնում է ապոստիլով:

12. Սույն հոդվածի 11-րդ մասում նշված մարմինները հայցվող տեղեկությունները տրամադրում են արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարության հարցումն ստանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

13. Պաշտոնական փաստաթուղթն ապոստիլով վավերացնելու ժամկետի երկարաձգման մասին դիմողը տեղեկացվում է դիմումը ներկայացնելուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, էլեկտրոնային կամ փոստային նամակով կամ իր տրամադրած կապի այլ միջոցներով:

14. Ապոստիլով վավերացման ենթակա չեն՝

1) դիվանագիտական կամ հյուպատոսական գործակալների տված փաստաթղթերը.

2) առևտրային կամ մաքսային գործունեության հետ ուղղակիորեն կապված վարչական փաստաթղթերը: